

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

0811.03.5 «ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

0811.03.01.5 «ՏԵԽՆԻԿ ԱԳՐՈՆՈՄ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2017

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քնն.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր յարանալին բեռնվածություն	Այդ թվում			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս	
						Ընդամենը	Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	3-րդ կիս. 15 Շաբ	4-րդ կիս. 14 շաբ.	5-րդ կիս. 12 շաբ.	6-րդ կիս. 15 շաբ.	7-րդ կիս. 2աբ.
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3;4տ		72	54	18		36	36				
2.	Տնտեսագիտության հիմունքներ		6տ		50	40	10				50			
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5տ		48	40		8			48			
4.	Իրավունքի հիմունքներ		5տ		36	30	6				36			
5.	Պատմություն		3տ		48	42		6	48					
6.	Ռուսաց լեզու		3;4տ		72	54	18		26	46				
7.	Օտար լեզու		3;4տ		72	54	18		36	36				
8.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		6տ		36	30	6				36			
9.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		28	24	4		28					
10.	Ֆիզիկական կուլտուրա		3-5;6տ		112	6	106		30	28	24	30		
	ԸՆԴԱՄԵՆԸ				564	364	186	14	204	146	108	116		
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
1.	Հաղորդակցություն		4տ		36	10	26			36				
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	12	24		36					
3.	Համակարգչային օպերատորություն		4տ		36	4	32			36				
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	26	82		36	72	0			

	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
1	Հողի գյուղատնտեսական նշանակությունը, տիպերը և հատկությունները		3տ		48	30	18		48				
2	Ընդհանուր երկրագործություն		3տ		36	32	4		36				
3	Պաշտպանված գրունտի տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները		3տ		36	22	14		36				
4	Ջերմատնային տնտեսություններում օգտագործվող սարքավորումների, մեխանիզմների և գործիքների կիրառման հմտություններ		3տ		48	16	32		48				
5	Հողի մշակման աշխատանքների կազմակերպում		3տ		36	16	20		36				
6	Ջերմատնային տնտեսությունների հողախառնուրդների պատրաստման հմտություններ		4տ		36	10	26		36				
7	Հողի և մշակաբույսերի վնասատուներն ու հիվանդությունները: Դրանց դեմ պայքարի միջոցները, ձևերն ու մեթոդները		3տ		48	26	22		48				
8	Բույսերի աճի և զարգացման գործընթացը: Առանձնահատկությունները ջերմատնային տնտեսություններում		3տ		48	22	26		48				
9	Պարարտանյութերի և սնուցման նյութերի տեսակները և կիրառման տեխնոլոգիան		4տ		36	14	22		36				
10	Ցանքաշրջանառության սխեմաների մշակման հմտություններ		4տ		36	14	22		36				
11	Ցանքի և սածիլման աշխատանքների կազմակերպումը ջերմատնային տնտեսություններում		4տ		36	12	24		36				
12	Մշակաբույսերի անհող մշակության		6տ		48	20	28				48		

	կազմակերպում												
13	Ընդհանուր էլեկտրատեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ		4տ		54	24	30			54			
14	Տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդները		5տ		54	24	30			54			
	Ձեռներեցություն		6տ		72	22	50					72	
	ԸՆԴԱՄԵՆԸ				672	304	368			300	198	54	120
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
	Ջերմատնային տնտեսությունում կաթիլային ոռոգման և ցողարկման (անձրևացման) տեխնոլոգիաները և համակարգերը		4տ		48	20	28			48			
1	Ջերմատնային տնտեսություններում սաճիլների աճեցման հմտություններ		5տ		48	18	30					48	
2	Ջերմատնային տնտեսություններում լոբու մշակության հմտություններ		5տ		48	14	34					48	
3	Ջերմատնային տնտեսություններում տերևաբանջարների մշակության հմտություններ		5տ		48	14	34					48	
4	Ջերմատնային տնտեսություններում արմատապտուղների մշակության հմտություններ		4տ		36	14	22			36			
5	Ջերմատնային տնտեսություններում դդմազգիների մշակության հմտություններ		5տ		48	14	34					48	
6	Ջերմատնային տնտեսություններում տաքդեղի մշակության հմտություններ		6տ		48	14	34					48	
7	Ջերմատնային տնտեսություններում լոլիկի մշակության հմտություններ		6տ		54	14	40					54	

8	Ջերմատնային տնտեսություններում վարունգի մշակության հմտություններ		6տ		48	14	34					48		
9	Ջերմատնային տնտեսություններում սմբուկի մշակության հմտություններ		5տ		36	12	24				36			
10	Ջերմատնային տնտեսություններում ծաղիկների աճեցման հմտություններ		6տ		48	16	32					48		
11	Ջերմատնային տնտեսություններում կաղամբի մշակության հմտություններ		6տ		48	14	34					48		
12	Ջերմատնային տնտեսություններում սնկերի աճեցման հմտություններ		6տ		48	12	36					48		
	ԸՆԴԱՄԵՆԸ				558	170	388			84	228	294		
	ԸՆՏՐՈՎԻ		5տ		38						38			
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				18					4	4	10		
	ԸՆԴԱՄԵՆԸ				2016	908	1028	14	540	504	432	540		
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				200									
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36		

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ			
1	Ընտանեկան կյանքի նախապատրաստում				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ			
2	Տարիքային հոգեբանություն			1	հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների			
				2	տնտեսագիտական առարկաների			
				3	օտար լեզուների			
				4	անհատական համակարգիչների			
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Հողագիտության			
1	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	3;4;5;6	12	6	բուսաբուծության			
2	Արտադրական պրակտիկա	4;5	5	7	գյուղատնտեսական արտադրության սարքավորումների և գործիքների			
3	Նախավարտական պրակտիկա	6	3	8	էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի			
					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ			
	ԸՆԴԱՄԵՆԸ		20	1	ագրոքիմիայի			
VI. ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ					ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐ			
Հունիսի 22-ից հուլիսի 5-ը շրջանում երկու համալիր պետական քննություն ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներից, կամ դիպլոմային պաշտպանություն				1	ջերմատուն			
				ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ				
				1	Մարզադահլիճ			
				2	Մարզահրապարակ			

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ զծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Համարիչ-հայտարարով բաժանված շաբաթների օրերի առաջին մասն օգտագործվում է համարիչի, մյուս մասը՝ հայտարարի նշանակության համար:
6. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
7. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
8. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
9. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:

10. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
11. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
12. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաթինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-17-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար:
6.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
7.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
8.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար

		<p>հաջողությունների համար,</p> <p>2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
9.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
10.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
11.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
12.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
13.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p>

		5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
14.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
15.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
16.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
17.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
18.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
19.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային

		<p>առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առանց էական թերությունների կատարում է հանձնարարությունները:</p>
20.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
21.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
22.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
23.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հասցեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,

		7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
24.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
25.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
26.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
27.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
28.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,

		6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
29.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
30.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
31.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
32.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-17-001
33.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
34.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝

		տեսական ուսուցում 12 ժամ գործնական աշխատանք 24 ժամ
35.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
36.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
37.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
38.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
39.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
40.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:

		<p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</p> <p>կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
41.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
42.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
43.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
44.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն)</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,</p>
45.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս

		<p>օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
46.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
47.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
48.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
49.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
50.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>

51.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
52.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
53.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
54.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
55.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:
56.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:

57.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
58.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-17-001
59.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
60.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ
61.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
62.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն, 6) աշխատի համացանցում:
63.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
64.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
65.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,

		<p>2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
66.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
67.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:</p>
68.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>

69.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
70.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
71.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
72.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
73.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
74.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
75.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:

76.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
77.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
78.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
79.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
80.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
81.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում

		կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
82.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
83.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
84.	Ուսումնառության արդյունք 5	Յուզադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
85.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
86.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
87.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

88. Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
89. Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
90. Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է « համացանց » հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
91. Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
92. Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
93. Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԻՊԵՐԸ ԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»		
1.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հողի ֆիզիկաքիմիական կազմի և հատկությունների, հողի տիպերի և դրանց առանձնահատկությունների, մոլախոտերի ճանաչման, դրանց հաշվառման մեթոդների և պայքարի միջոցների, մշակման համակարգերի վերաբերյալ անհրաժեշտ հենքային գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
3.	Մոդուլի տևողությունը	48 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
5.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության համար հողի դերը, 2) բնութագրի հողի հատկությունները, 3) ներկայացնի հողերի տիպերը, դրանց առանձնահատկությունները, 4) բացատրի պաշտպանված գրունտում հողային միջավայրի յուրահատկությունները, 5) ներկայացնի հողաբարելավման աշխատանքների տեսակները և անհրաժեշտությունը:
6.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
7.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության համար հողի դերը
8.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողառաջացման գործընթացը և գործոնները, 2) ճիշտ է ներկայացնում հողի տնտեսական նշանակությունը և յուրահատկությունները, 3) հողի մեխանիկական կազմը ճիշտ է բացատրում, 4) հողի օրգանական կազմը ճիշտ է բացատրում, 5) հողի հանքային կազմը ճիշտ է բացատրում, 6) ճիշտ է բացատրում հողի ստրուկտուրայնությունը և նրա երկրագործական նշանակությունը,

		7) հողի բերրիությունը բնութագրող պայմանները ճիշտ է ներկայացնում:
9.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկման արդյունքների հիման վրա, որի ընթացքում անդրադարձ է կատարվելու հողի վերաբերյալ հիմնական հասկացություններին և դրանց մեկնաբանություններին:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հողի բնութագրումը և դերը գյուղատնտեսական արտադրության համար: Հողերի առաջացման գործընթացը: Հողի կազմը ըստ տարբեր բաղադրիչների: Դրանց ուսումնասիրման անհրաժեշտությունը և արդյունքների կիրառումը գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առումով: Հողի կազմի հիմնական բնութագրիչները: Բերրիությունը որպես հողի հիմնական հատկություն, այն բնութագրող պայմանները: Պաշտպանված գրունտում հողերի օգտագործման առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկման ընթացքում ցուցաբերում է բավարար տեսական գիտելիքներ և կարողանում է անհրաժեշտ գործնական եզրահանգումներ կատարել:</p>
10.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ցուցադրական նյութեր: Գործնական պարապմունքի ժամանակ դաշտային պայմաններում ուսանողները ծանոթանում են հողի բաղադրիչներին:</p>
11.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
12.	Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել հողի հատկությունները
13.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հողի որոշակի հատկությունների դիտարկման կարևորությունը հիմնավորում է, 2) հողի համապատասխան ռեժիմների բովանդակությունը ճիշտ է բացատրում, 3) հողի համապատասխան հատկությունների նշանակությունը ճիշտ է բացատրում, 4) հողի որոշակի հատկությունների գնահատման կարևորությունը ճիշտ է մեկնաբանում, 5) հողի հատկությունների գնահատման արդյունքների կիրառման կարևորությունը ճիշտ է

		ներկայացնում:
14.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկման արդյունքների հիման վրա: Քննարկման ընթացքում վերլուծվում են հողի հիմնական հատկություններին ու դրանց գործնական կիրառմանը վերաբերող հարցեր: Ուսանողները պետք է ոչ միայն բացատրեն հողի որոշակի հատկությունների բովանդակությունը, այլ նաև դրանց կարևորությունը՝ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առումով:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հողային միջավայրի որոշակի հատկությունների առանձնացման և ուսումնասիրման անհրաժեշտությունը և կարևորությունը: Գյուղատնտեսության գիտական վարման կարևորությունը արդի պայմաններում: Հողի հիմնական հատկությունները և ռեժիմները: Դրանց բովանդակության բացատրությունը: Հողի առանձին հատկությունների գնահատման կարևորությունը: Հողի հատկությունների գնահատման ձևերն ու մեթոդները: Հողի որոշակի հատկությունների բարելավման անհրաժեշտությունը և կարևորությունը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ:</p>
15.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուղեցույց գրականություն, ցուցադրական նյութեր, հողի առանձին հատկությունների գնահատման համար պահանջվող միջոցներ: Կարևորվում է նաև համապատասխան համակարգչային նյութերի առկայությունը:</p>
16.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
17.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հողերի տիպերը, դրանց առանձնահատկությունները
18.	Կատարման չափանիշներ	<p>1) հողերի տիպերի առանձնացման հատկանիշները ճիշտ է ներկայացնում,</p> <p>2) տարբեր հողատիպերի գյուղատնտեսական օգտագործման առանձնահատկությունները ճիշտ է ներկայացնում,</p>

		<p>3) համապատասխան հատկանիշներով ճիշտ է գնահատում հողի տիպը,</p> <p>4) ՀՀ հողերի տիպերի տեղաբաշխումը ճիշտ է ներկայացնում,</p> <p>5) կոնկրետ տիպի հողերում մշակաբույսերի տեղաբաշխման նպատակահարմար տարբերակները ճիշտ է ներկայացնում:</p>
19.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողը պետք է ըստ հողի տիպերի ներկայացնի յուրաքանչյուրի առանձնահատկությունները, դրական և բացասական կողմերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հողերի տիպայնացման նշանակությունը: Հողերի տիպերը, դրանց բնութագրիչները, գյուղատնտեսական արտադրության համար պիտանելիությունը: Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տիպերը, դրանց տեղաբաշխվածությունը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում:</p>
20.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, ուսումնական տեսաֆիլմեր:</p>
21.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>
22.	Ուսումնառության արդյունք 4	<p>Բացատրել պաշտպանված գրունտում հողային միջավայրի յուրահատկությունները</p>
23.	Կատարման չափանիշներ	<p>1) պաշտպանված գրունտի գյուղատնտեսության առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>2) պաշտպանված գրունտի հողային միջավայրի ձևավորման տեխնոլոգիաները ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) պաշտպանված գրունտի հողային միջավայրում անհրաժեշտ հատկությունների պահպանման միջոցառումները հիմնավորում է,</p> <p>4) պաշտպանված գրունտում հողօգտագործման հիմնախնդիրները և դրանց կանխարգելման քայլերը ճիշտ է ներկայացնում:</p>
24.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկման հիման վրա: Քննարկման ընթացքում</p>

		<p>բացահայտվելու է պաշտպանված գրունտի գյուղատնտեսության հարցերում ուսանողի կողմնորոշման մակարդակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Պաշտպանված գրունտի գյուղատնտեսության անհրաժեշտությունը ներկա պայմաններում և առանձնահատկությունները: Պաշտպանված գրունտի գյուղատնտեսական տնտեսություններում հողային միջավայրի ձևավորման առանձնահատկությունները: Հողային միջավայրի ձևավորման տեխնոլոգիական լուծումները: Հողախառնուրդների կիրառման կարևորությունը: Հողային միջավայրի հատկությունների պահպանման կարևորությունը և միջոցառումները: Պաշտպանված գրունտի գյուղատնտեսության հիմնախնդիրները՝ կապված հողերի օգտագործման առանձնահատկությունների հետ: Դրանց հաղթահարման ուղիները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ցուցաբերում է բավարար գիտելիքներ, կատարում է հիմնավոր եզրահանգումներ:</p>
25.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պաշտպանված գրունտի գյուղատնտեսական տնտեսությունների վերաբերյալ տեսաֆիլմեր:
26.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ
27.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հողաբարելավման աշխատանքների տեսակները և անհրաժեշտությունը
28.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հողաբարելավման աշխատանքների նպատակը և տնտեսական կարևորությունը ճիշտ է բացատրում, 2) հողաբարելավման աշխատանքների ուղղությունները ճիշտ է բնութագրում, 3) հողաբարելավման աշխատանքների պարբերականությունը և անընդհատությունը հիմնավորում է, 4) հողաբարելավման աշխատանքների գործընթացները ճիշտ է ներկայացնում, 5) պաշտպանված գրունտում հողաբարելավման աշխատանքների յուրահատկությունները ճիշտ է ներկայացնում:
29.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գրավոր առաջադրանք կատարելու, ինչպես նաև իրական

		<p>պայմաններում հողաբարելավման աշխատանքներին մասնակցելու արդյունքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ընդհանուր գծերով բնութագրել հողաբարելավման առանձին աշխատանքները, դրանց էական կողմերը: Գործնական աշխատանքի ընթացքում նրանք ոչ միայն գնահատում են հողաբարելավման այս կամ այն միջոցառման անհրաժեշտությունը, այլ նաև մասնակցում են աշխատանքներին:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հողաբարելավման աշխատանքների անհրաժեշտությունը և նպատակը: Հողաբարելավման աշխատանքների տեսակները, դրանց էական կողմերը: Աշխատանքների կատարման պարբերականությունը: Աշխատանքների առանձնահատկությունները պաշտպանված գրունտի տնտեսություններում:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե գրավոր առաջադրանքը կատարվում է հիմնականում ճիշտ, իսկ գործնական աշխատանքների ընթացքում ուսանողը ցուցադրում է գործողությունները գրագետ կատարելու կարողություն:</p>
30.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն: Գործնական առաջադրանքը կատարվում է դաշտային պայմաններում:
31.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ի Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն»		
32.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-002
33.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր երկրաբանության հիմնական հասկացությունների և օրենքների բովանդակության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, ինչը կարևոր է նրա ապագա մասնագիտական գործունեության ընթացքում գրագետ ու հիմնավոր որոշումներ ընդունելու համար:
34.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝

		տեսական ուսուցում՝ 32 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
35.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
36.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) բացատրի երկրագործության օրենքները, 2) դասակարգի մոլախոտերը, դրանց դեմ պայքարի միջոցները, 3) ներկայացնի հողի մշակման համակարգերը, 4) ներկայացնի երկրագործության համակարգերը:
37.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
38.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել երկրագործության օրենքները
39.	Կատարման չափանիշներ	1) երկրի տնտեսական համակարգում գյուղատնտեսության դերը և առանձնահատկությունները ճիշտ է բնութագրում, 2) գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և ոլորտների խնդիրները ճիշտ է ներկայացնում, 3) գյուղատնտեսական արտադրության ներկա առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները ճիշտ է ներկայացնում, 4) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխազդեցության հիմնախնդիրները ճիշտ է մեկնաբանում, 5) երկրագործության օրենքների բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 6) օրգանական գյուղատնտեսության կարևորությունը և հնարավորությունները ճիշտ է բացահայտում, 7) երկրագործության օրենքների պահանջների պահպանման և գործնական կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը հիմնավորում է:
40.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գրավոր առաջադրանք կատարելու և խմբային քննարկումների հիման վրա: Գրավոր առաջադրանքի միջոցով ուսանողը ներկայացնելու է երկրագործության օրենքների առանցքային հարցերը, իսկ խմբային քննարկման ընթացքում բացահայտվելու է երկրագործության

		<p>հիմունքների հիմնական հասկացություններում կողմնորոշվելու ուսանողի կարողությունը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Գյուղատնտեսությունը որպես տնտեսության կարևորագույն բնագավառ, գյուղատնտեսության խնդիրները: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը: ՀՀ գյուղատնտեսության ընդհանուր բնութագիրը: Գյուղատնտեսությունը որպես մարդու կողմից բնության հնարավորությունները օգտագործելու յուրահատուկ համակարգ: Գյուղատնտեսության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հետևանքները: Օրգանական գյուղատնտեսության բնութագիրը, զարգացման հեռանկարները: Երկրագործության օրենքները որպես գյուղատնտեսության վարման կանոնների հիմք, դրանց բովանդակությունը, պահանջների դրսևորումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե երկրագործության օրենքների պահանջները ճիշտ է սահմանվում, ներկայացվում է դրանց կարևորությունը, իսկ քննարկման ժամանակ ուսանողը դրսևորում է առաջադրված հարցերում ճիշտ կողմնորոշվելու ունակություն:</p>
41.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն:
42.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 8 ժամ
43.	Ուսումնառության արդյունք 2	Դասակարգել մոլախոտերը, դրանց դեմ պայքարի միջոցները
206.	Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 14 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 22 ժամ</p>
207.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՋՏՆՏ-5-17-004 «Ջերմատնային

		տնտեսություններում օգտագործվող սարքավորումների, մեխանիզմների և գործիքների կիրառման հմտություններ» և ՋՏՆՏ-5-17-008 «Բույսերի աճի և զարգացման գործընթացը: Առանձնահատկությունները ջերմատնային տնտեսություններում» մոդուլները:
208.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պարզաբանի պարարտանյութերի և սնուցման նյութերի կիրառման անհրաժեշտությունը, 2) բնութագրի պարարտանյութերի և սնուցման նյութերի տեսակները, 3) ներկայացնի պարարտանյութերի և սնուցման նյութերի կիրառման նորմաները և տեխնոլոգիան:
209.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
210.	Ուսումնառության արդյունք 1	Պարզաբանել պարարտանյութերի և սնուցման նյութերի կիրառման անհրաժեշտությունը
211.	Կատարման չափանիշներ	1) հիմնավորում է պարարտանյութերի և սնուցման նյութերի անհրաժեշտությունը հողի հատկությունների բարելավման գործում, 2) հիմնավորում է պարարտանյութերի և սնուցման նյութերի անհրաժեշտությունը մշակաբույսերի սննդառության պայմանների բարելավման գործում, 3) հիմնավորում է պարարտանյութերի և սնուցման նյութերի անհրաժեշտությունը բույսերի բերքատվության և որակի բարելավման գործում:
212.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկման միջոցով: Ուսանողներին հարցեր կառաջադրվեն գյուղատնտեսության մեջ՝ ընդհանրապես և պաշտպանված գրունտի գյուղատնտեսության մեջ՝ մասնավորապես պարարտանյութերի և սնուցող նյութերի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Պարարտացման գործընթացի նշանակությունը, այն հիմնավորող պայմանները: Ինտենսիվ գյուղատնտեսության վարումը և պարարտացումը: Ցածր բերրիության հողերում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման դեպքում պարարտացման անհրաժեշտությունը: Պարարտացման աշխատանքների առանձնահատկությունները պաշտպանված գրունտի տնտեսություններում:

		Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար գիտելիքներ և ակտիվ մասնակցում է քննարկումներին:
213.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Օգտագործվում է մասնագիտական գրականություն, վիճակագրական տեղեկություններ:
214.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
215.	Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել պարարտանյութերի և սնուցման նյութերի տեսակները
216.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պարարտանյութերի և սնուցող նյութերի հիմնական խմբերը, 2) ճիշտ է ներկայացնում օրգանական պարարտանյութերը, 3) ճիշտ է ներկայացնում հանքային պարարտանյութերը, 4) ճիշտ է ներկայացնում բակտերիական պարարտանյութերը, 5) ճիշտ է ներկայացնում սնուցող նյութերը:
217.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվող թեստում պետք է բնութագրել պարարտանյութի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները, դրական ու բացասական դրսևորումները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Պարարտանյութերի ու սնուցման նյութերի տեսակները, դրանց առավելությունները և թերությունները: Օրգանական, հանքային և բակտերիական պարարտանյութերի տեսականին, դրանց հիմնական բնութագրիչները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում ճիշտ է կատարվում:</p>
218.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պարարտանյութերի և սնուցող նյութերի նմուշներ, դրանց կազմության վերաբերյալ տեղեկություններ:
219.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ

220.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պարարտանյութերի և սնուցման նյութերի կիրառման նորմաները և տեխնոլոգիան
221.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) պարարտացման և սնուցման գործողությունների տեխնոլոգիայի առանցքային հարցերը ճիշտ է մեկնաբանում, 2) ըստ մշակաբույսերի պարարտացման և սնուցման նորմաները ճիշտ է ներկայացնում, 3) պարարտացման և սնուցման ժամկետների պահպանումը ճիշտ է մեկնաբանում, 4) կազմում է աշխատանքների իրականացման ժամանակացույցը, 5) պարարտանյութերի և սնուցող նյութերի անհրաժեշտ քանակությունը ճիշտ է հաշվարկում, 6) ճիշտ է ընտրում և կիրառում անհրաժեշտ սարքավորումները և գործիքները, 7) պաշտպանված գրունտում պարարտացման և սնուցման աշխատանքների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում, 8) պարարտացման և սնուցման գործողությունները ճիշտ է կատարում, 9) կատարում է պարարտացման ու սնուցման աշխատանքների վերաբերյալ աշխատողների հրահանգավորում, 10) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
222.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Քննարկման ընթացքում պարզաբանվում է պարարտանյութերի կիրառման հետ կապված հարցերը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով ուսանողներին հանձնարարվելու է հաշվել պարարտանյութերի պահանջվող քանակությունը, կազմել պարարտացման աշխատանքների ժամանակացույց, կատարել պարարտացման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Պարարտացման աշխատանքների տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը, աշխատանքների կատարման կարգը: Տարբեր պարարտանյութերի նորմաները ըստ մշակաբույսերի: Պարարտացման համար օգտագործվող սարքավորումները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ, իսկ գործնական առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>

223.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու տեղեկատու գրականություն, պարարտացման աշխատանքների իրականացման վերաբերյալ մեթոդական ցուցումներ, տեխնիկական միջոցներ, անվտանգության պարագաներ: Գործնական առաջադրանքները կատարվում է դաշտային պայմաններում:
224.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՑԱՆՔԱՇԻՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԻԵՄԱՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
225.	Մոդուլի դասիչը	ԶՏՆՏ-5-17-010
226.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսության համար էական կարևորություն ունեցող հասկացություններից մեկի՝ ցանքաշրջանառության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և ապահովել սխեմաների մշակման գործնական հմտություններ:
227.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ
228.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԶՏՆՏ-5-17-008 «Բույսերի աճի և զարգացման գործընթացը: Առանձնահատկությունները ջերմատնային տնտեսություններում» մոդուլը:
229.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ցանքաշրջանառության անհրաժեշտությունը և գիտական հիմնավորումները, 2) բացատրի պաշտպանված գրունտում ցանքաշրջանառության առանձնահատկությունները, 3) կազմի ցանքաշրջանառության սխեմաներ:
230.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
231.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ցանքաշրջանառության անհրաժեշտությունը և գիտական հիմնավորումները
232.	Կատարման չափանիշներ	1) հողի հնարավորությունների և մշակաբույսերի պահանջի միջև անհամապատասխանությունների

		<p>ձևավորումը հիմնավորում է,</p> <p>2) մշակաբույսերի մշակման նպատակահարմար հաջորդականության տնտեսական արդյունավետությունը հիմնավորում է,</p> <p>3) ինտենսիվ գյուղատնտեսության պայմաններում ցանքաշրջանառության դերի բարձրացման կարևորությունը ճիշտ է մեկնաբանում,</p> <p>4) ցանքաշրջանառության ազդեցությունը հողի որակական ցուցանիշների պահպանման վրա ճիշտ է մեկնաբանում,</p> <p>5) ցանքաշրջանառության վերաբերյալ արդի մոտեցումները ճիշտ է մեկնաբանում:</p>
233.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների արդյունքների հիման վրա: Քննարկումների ընթացքում գյուղատնտեսական գիտության ձեռքբերումների հիման վրա ուսանողը պետք է ներկայացնի ցանքաշրջանառության անհրաժեշտության հիմնավորումները, ըստ կոնկրետ դեպքերի պետք է պարզաբանի ցանքաշրջանառության սխեմաների չպահպանման հետևանքները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Ցանքաշրջանառության հասկացությունը և կարևորությունը գյուղատնտեսության ներկա մակարդակի պայմաններում: Մշակաբույսերի մշակման ճիշտ հաջորդականության պահպանման հիմնավորումները: Ցանքաշրջանառության տնտեսական արդյունավետությունը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ցուցաբերում է բավարար գիտելիքներ:</p>
234.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Օգտագործվում է մասնագիտական գրականություն, ցուցադրական սխեմաներ:</p>
235.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>
236.	Ուսումնառության արդյունք 2	<p>Բացատրել ջերմատնային տնտեսություններում ցանքաշրջանառության առանձնահատկությունները</p>
237.	Կատարման չափանիշներ	<p>1) ցանքաշրջանառության անհրաժեշտությունը պայմանավորող հանգամանքների դրսևորումները ջերմատնային տնտեսություններում ճիշտ է ներկայացնում,</p>

		2) ցանքաշրջանառության ժամկետների փոփոխությունները ջերմատնային տնտեսություններում հիմնավորում է:
238.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա, որի ընթացքում հիմնական շեշտը դրվում է պաշտպանված գրունտում ցանքաշրջանառության հարցերին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ցանքաշրջանառության անհրաժեշտությունը պայմանավորող հանգամանքների դրսևորումները ջերմատնային տնտեսություններում, ցանքաշրջանառության ժամկետների փոփոխությունները ջերմատնային տնտեսություններում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ:
239.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Օգտագործվում է մասնագիտական գրականություն, ցուցադրական սխեմաներ:
240.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
241.	Ուսումնառության արդյունք 3	Կազմել ցանքաշրջանառության սխեմաներ
242.	Կատարման չափանիշներ	1) ցանքաշրջանառության սխեմաների կարևորությունը ճիշտ է ներկայացնում, 2) ցանքաշրջանառության սխեմաները մշակելու համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը ճիշտ է ներկայացնում, 3) ըստ իրավիճակի ելակետային տվյալների հավաքագրումը ճիշտ է, 4) ըստ ելակետային տվյալների եզրահանգումները հիմնավոր են, 5) ճիշտ է մշակում ցանքաշրջանառության սխեման:
243.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է որոշակի ելակետային պայմանների համար կազմել ցանքաշրջանառության սխեմաներ՝ նաև պաշտպանված գրունտի տնտեսությունների համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.

		Ցանքաշրջանառություններ և անհերթափոխ ցանքեր: Ցանքաշրջանառության սխեմաների տեսակները և բովանդակությունը: Դրանց մշակման համար ելակետային տվյալները: Ցանքաշրջանառության սխեմաների մշակման կարգը, հիմնավորումները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ցանքաշրջանառության սխեման հիմնավոր է մշակվել:
244.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Օգտագործվում է մասնագիտական և մեթոդական գրականություն:
245.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՑԱՆՔԻ ԵՎ ՍԱԾԻԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»		
246.	Մոդուլի դասիչը	ԶՏՆՏ-5-17-011
247.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ջերմատնային տնտեսություններում ցանքի և սաժիլման աշխատանքներ կատարելու գործնական հմտություններ:
248.	Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
249.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԶՏՆՏ-5-17-005 «Հողի մշակման աշխատանքների կազմակերպում» մոդուլը:
250.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պարզաբանի ցանքի աշխատանքների հիմնական հասկացությունները, 2) պարզաբանի սաժիլման աշխատանքների հիմնական հասկացությունները:
251.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
252.	Ուսումնառության արդյունք 1	Պարզաբանել ցանքի աշխատանքների հիմնական հասկացությունները
253.	Կատարման չափանիշներ	1) ցանքի էությունը ճիշտ է բացատրում,

		<p>2) ցանքի իրականացման տեխնոլոգիան ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) օգտագործվող սարքավորումների և մեխանիզմների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>4) բացատրում է ըստ մշակաբույսերի ցանքի ճիշտ իրականացումն ապահովող գործոնները,</p> <p>5) ցանքին ներկայացվող պայմանները ճիշտ է բացատրում,</p> <p>6) ցանքի եղանակները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>7) ցանքի չափաքանակները ճիշտ է ներկայացնում,</p> <p>8) ցանքի ժամկետները ճիշտ է ներկայացնում,</p> <p>9) ցանքի որակի ցուցանիշները ճիշտ է ներկայացնում,</p> <p>10) ցանքի խնամքի միջոցառումները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>11) ջերմատնային տնտեսություններում ցանքի առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում:</p>
<p>254.</p>	<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է ցանքի վերաբերյալ հիմնական հասկացությունների բովանդակության քննարկումների և համապատասխան ցուցանիշների մեծությունների հաշվարկման արդյունքների հիման վրա: Գնահատումը իրականացվում է աշխատանքների կատարման փուլերին համապատասխան:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Մշակաբույսերի ցանքը և դրան ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները: Սպասվող հնարավոր բերքի հաշվարկման կարգը: Ցանքի եղանակները, դրանց կիրառման պայմանները: Ցանքի իրականացման տեխնոլոգիայի բնութագրումը: Ցանքին ներկայացվող պայմանները, ցանքի ժամկետները, որակի ցուցանիշները: Սերմացուի չափաքանակները տարբեր մշակաբույսերի համար: Ցանքի համար օգտագործվող մեխանիզմները և սարքավորումները: Ցանքերի խնամքի աշխատանքները, կատարման ժամկետները, նշանակությունը: Ցանքի առանձնահատկությունները պաշտպանված գրունտում: Ցանքի կազմակերպման աշխատանքների ընդհանուր նկարագիրը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը աշխատանքները կատարում է առանց էական սխալների:</p>

255.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական նյութեր:
256.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
257.	Ուսումնառության արդյունք 2	Պարզաբանել սածիլման աշխատանքների հիմնական հասկացությունները
258.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սածիլման եղանակով մշակվող մշակաբույսերը ճիշտ է ներկայացնում, 2) սածիլների կիրառման առավելությունները հիմնավորում է, 3) սածիլների որակը ճիշտ է գնահատում, 4) սածիլների վերատնկման հետ կապված գործոնները բացատրում է, 5) սածիլմանը ներկայացվող պայմանները ճիշտ է բացատրում, 6) սածիլների նախապատրաստման գործողությունները ճիշտ է կատարում, 7) հողի նախապատրաստումը ճիշտ է կատարում, 8) սածիլների տեղաբաշխման նորմաները ճիշտ է ներկայացնում, 9) սածիլման ժամկետները ճիշտ է ներկայացնում, 10) սածիլման որակի ցուցանիշները ճիշտ է ներկայացնում, 11) սածիլների խնամքի միջոցառումները ճիշտ է մեկնաբանում, 12) աշխատողների հրահանգավորման առանցքային հարցերը ամբողջությամբ ներկայացնում է, 13) բացատրում է ջերմատնային տնտեսություններում սածիլման առանձնահատկությունները, 14) ճիշտ է ընտրում և կիրառում սածիլման համար անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները, 15) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
259.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքների կատարման հիման վրա, որի ընթացքում ուսանողը պետք է կատարի սածիլման աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Սածիլման եղանակով մշակվող մշակաբույսերը: Սածիլման եղանակի առավելությունները: Սածիլների որակի ցուցանիշները և գնահատումը: Սածիլների նախապատրաստումը վերատնկման համար: Հողի</p>

		<p>նախապատրաստումը սածիլման համար: Սածիլների անհրաժեշտ քանակության հաշվարկը: Սածիլների խնամքի աշխատանքների ընդհանուր բնութագիրը, կատարման ժամկետները: Օգտագործվող գործիքները և հարմարանքները:</p> <p>Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքները կատարվում է ընդունված պայմաններին համապատասխան:</p>
260.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Օգտագործվում է մասնագիտական և մեթոդական նյութեր: Գործնական առաջադրանքները կատարվում է դաշտային պայմաններում:</p>
261.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՀՈՂ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»		
262.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-012
263.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մշակաբույսերի անհող մշակության վերաբերյալ գիտելիքներ և անհրաժեշտ աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ:</p>
264.	Մոդուլի տևողությունը	<p>48 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 20 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 28 ժամ</p>
265.	Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՋՏՆՏ-5-17-004 «Զերմատնային տնտեսություններում օգտագործվող սարքավորումների, մեխանիզմների և գործիքների կիրառման հմտություններ» և ՋՏՆՏ-5-17-008 «Բույսերի աճի և զարգացման գործընթացը: Առանձնահատկությունները ջերմատնային տնտեսություններում» մոդուլները:</p>
266.	Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի մշակաբույսերի անհող մշակության կարևորությունը և զարգացման հեռանկարները, 2) ներկայացնի մշակաբույսերի անհող մշակության միջավայրի բաղադրիչները,

		<p>3) բնութագրի մշակաբույսերի անհող մշակության կառույցները, սարքավորումները, հարմարանքները,</p> <p>4) կազմակերպի սաժիլների աճեցում,</p> <p>5) բացատրի հիդրոպոնիկ եղանակով աճեցվող բույսերի ագրոտեխնիկայի առանձնահատկությունները:</p>
267.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
268.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մշակաբույսերի անհող մշակության կարևորությունը և զարգացման հեռանկարները
269.	Կատարման չափանիշներ	<p>1) մշակաբույսերի անհող մշակության էությունը ճիշտ է բացատրում,</p> <p>2) մշակաբույսերի անհող մշակության կարևորությունը հիմնավորում է,</p> <p>3) ճիշտ է բնութագրում մշակաբույսերի անհող մշակության ձևերը,</p> <p>4) մշակաբույսերի անհող մշակության առավելությունները ճիշտ է բացատրում,</p> <p>5) անհող մշակության մշակաբույսերի տեսակները ճիշտ է ներկայացնում,</p> <p>6) մշակաբույսերի անհող մշակության զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները ճիշտ է ներկայացնում:</p>
270.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա, որի ընթացքում բացահայտվում է մշակաբույսերի անհող մշակության վերաբերյալ ուսանողի գիտելիքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Մշակաբույսերի անհող մշակության տեխնոլոգիայի ձևավորման հիմքերը: Մշակաբույսերի անհող մշակությունը որպես համապատասխան իրավիճակներում մարդուն բուսական թարմ սննդով ապահովելու կարևոր քայլ: Մշակաբույսերի անհող մշակության ձևերը, առանձնահատկությունները: Անհող միջավայրում մշակվող մշակաբույսերը: Զարգացման հեռանկարները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ցուցաբերում է բավարար գիտելիքներ, կարողանում է առաջացած հարցերին տալ հիմնավոր պատասխաններ:</p>
271.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ցուցադրական տեսանյութեր:
272.	Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

	Ժամաքանակը	
273.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մշակաբուսերի անհող մշակության միջավայրի բաղադրիչները
274.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) մշակաբույսերի անհող մշակության միջավայրի բնութագիրը ճիշտ է, 2) լցանյութերի անհրաժեշտությունը և դրանց ներկայացվող պահանջները հիմնավորում է, 3) ըստ կոնկրետ իրավիճակների ճիշտ է գնահատում լցանյութերի որակական ցուցանիշները, 4) լցանյութերի որակական ցուցանիշների բարելավման քայլերը ճիշտ է կատարում, 5) սննդալուծույթների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորում է, 6) ճիշտ է իրականացնում միջավայրի հնարավոր անցանկալի պայմանների կանխման և վերացման աշխատանքները, 7) սննդալուծույթներում ներառվող սննդարար տարրերի կազմը և հարաբերակցությունը ճիշտ է մեկնաբանում, 8) ըստ պայմանների ճիշտ է պատրաստում սննդալուծույթ:
275.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է առաջադրված հարցերով գրավոր առաջադրանքի կատարման և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Գրավոր առաջադրանքի միջոցով ստուգվում է մշակաբույսերի անհող մշակության միջավայրի վերաբերյալ ուսանողի յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական առաջադրանքի ընթացքում պատրաստում է սննդալուծույթ, ստուգում է լցանյութի որակական ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Մշակաբույսերի անհող մշակության միջավայրը, դրա բաղադրիչները: Լցանյութեր, դրանց բնութագիրը և որակական ցուցանիշները: Անհող մշակության միջավայրի համար անցանկալի դրսևորումների կանխումը: Սննդալուծույթ, դրա անհրաժեշտությունը: Սննդալուծույթի բաղադրությունը և բաղադրիչների հարաբերակցությունը: Սննդալուծույթի պատրաստման կարգը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է հիմնականում ճիշտ:</p>
276.	Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:

	ռեսուրսները	Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու մեթոդական գրականություն, լցանյութեր, սննդալուծույթի բաղադրիչներ, տարաներ: Հնարավորության սահմաններում գործնական պարապմունքներն անց է կացվում աշխատատեղերում:
277.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
278.	Ուսումնառության արդյունք 3	Բնութագրել մշակաբույսերի անհող մշակության կառույցները, սարքավորումները, հարմարանքները
279.	Կատարման չափանիշներ	1) մշակաբույսերի անհող մշակության կառույցները ճիշտ է բնութագրում, 2) ճիշտ է ներկայացնում կառույցներում պահպանվող ռեժիմների նորմաները, 3) կառույցներին ներկայացվող պահանջների առանձնահատկությունները ճիշտ է բացատրում, 4) կառույցների համալրվածության համար անհրաժեշտ միջոցները ճիշտ է ներկայացնում, 5) պահանջվող սարքավորումների նշանակությունը և պարամետրերը ճիշտ է բնութագրում, 6) օգտագործվող հարմարանքների առանձնահատկությունները ճիշտ է հիմնավորում, 7) ըստ պայմանների կարգավորում է սարքավորումների աշխատանքի ռեժիմները, 8) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
280.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա, որի ընթացքում ուսանողը բացատրում է մշակաբույսերի անհող մշակության կառույցների ու սարքավորումների նշանակությունը, ներկայացնում աշխատանքի ռեժիմները, կարգավորում դրանք: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Մշակաբույսերի անհող մշակության կառույցները, դրանց պայմանները: Անհող մշակության համար կիրառվող հարմարանքներն ու սարքավորումները, դրանց նշանակությունը: Անհող մշակության միջավայրի բնութագրիչները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում:
281.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու մեթոդական գրականություն, ուսումնական տեսաֆիլմեր,

		համակարգչային նյութեր:
282.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
283.	Ուսումնառության արդյունք 4	Կազմակերպել սաժիլների աճեցում
284.	Կատարման չափանիշներ	1) սաժիլների համար սերմերի ընտրությունը ճիշտ է, 2) սաժիլների աճեցման միջավայրի պայմանները ապահովված է, 3) սաժիլների աճի սկզբնական շրջանի սնուցումը ճիշտ է կատարում, 4) սաժիլների տեղափոխման ժամկետները պահպանում է, 5) սաժիլների պաշտպանության միջոցառումները ժամանակին կատարում է:
285.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա, որոնց ընթացքում ուսանողները կատարելու են սաժիլների աճեցման հետ կապված գործողությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Մշակաբույսերի անհող մշակության համար սաժիլների աճեցման առանձնահատկությունները: Սերմերի ընտրությունը: Աճեցվող սաժիլների սնուցման կարգը: Սաժիլների տեղափոխման կազմակերպումը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքներն ուսանողը ճիշտ է կատարում:
286.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու մեթոդական գրականություն, ուսուցողական տեսանյութեր:
287.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
288.	Ուսումնառության արդյունք 5	Բացատրել հիդրոպոնիկ եղանակով աճեցվող բույսերի ագրոտեխնիկայի առանձնահատկությունները
289.	Կատարման չափանիշներ	1) բույսի վեգետացիայի ընթացքում լցանյութերի բարելավման գործողությունները ճիշտ է նկարագրում, 2) լցանյութերի բարելավման գործողությունները ճիշտ է կատարում, 3) բույսերի պաշտպանության միջոցառումների ժամկետները ճիշտ է որոշում, 4) բույսերի պաշտպանության նյութերը ճիշտ է ընտրում և նախապատրաստում, 5) բույսերի պաշտպանության գործողությունները ճիշտ է կատարում,

		<p>6) ըստ իրավիճակի սննդարար լուծույթը ճիշտ է պատրաստում,</p> <p>7) բույսերի ձևավորման գործողությունները ճիշտ է կատարում,</p> <p>8) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
290.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողը պետք է կատարի հիդրոպոնիկ եղանակով աճեցվող մշակաբույսերի խնամքի ու մշակության գործողությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հիդրոպոնիկ եղանակով մշակաբույսերի աճեցման ագրոտեխնիկայի ընդհանուր նկարագիրը, միջոցառումների բովանդակությունը: Լցանյութերի բարելավման նշանակությունը: Մշակաբույսերի պաշտպանության միջոցները, նյութերը, իրականացման կարգը: Մշակաբույսերի սնուցման կազմակերպումը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում:</p>
291.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն: Գործնական պարապմունքները նպատակահարմար է անցկացնել աշխատատեղերում:</p>
292.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Մ Ո Դ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ի Բ Է Լ Ե Կ Տ Ր Ա Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ե Վ Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ի Կ Ա Յ Ի Հ Ի Մ ՈՒ Ն Ք Ն Ե Ր»		
293.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-013
294.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էլեկտրական և մագնիսական դաշտերի, էլեկտրական շղթաների ու դրանց պարամետրերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և էլեկտրական և մագնիսական դաշտերի, էլեկտրական շղթաների ու դրանց պարամետրերի չափման, սարքավորումներում օգտագործվող էլեկտրոնային հարմարանքների, էլեկտրոնային սարքերի կիրառման կարողություններ:</p>

295.	Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
296.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-5-17-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
297.	Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բացատրի էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը, 2) ներկայացնի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկի շղթայի պարամետրերը, 3) էլեկտրական շղթաներում կատարի էլեկտրական չափումներ, 4) բացատրի գծային էլեկտրական շղթաների անցումային պրոցեսները, 5) ներկայացնի էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերը, էլեկտրոնային սխեմաներն ու սարքերը
298.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
299.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը
300.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում էլեկտրական դաշտի առաջացումը, 2) ճիշտ է բացատրում մագնիսական դաշտի առաջացումը, 3) ճիշտ է բացատրում էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:
301.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ դաշտի տեսակի ընտրել դրա առաջացման հնարավոր պայմանները, յուրաքանչյուրի հիմնական բնութագրերը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային հիմնական հասկացությունները. էլեկտրական դաշտի առաջացման պայմանները և հիմնական բնութագրերը. էլեկտրական լիցք, հոսանքի խտություն, հոսանքի ուժ, լարում, դիմադրություն, էլշու, էլեկտրական պոտենցիալ,</p>

		<p>էլեկտրական շղթա:</p> <p>Մագնիսական դաշտի առաջացման պայմանները և հիմնական բնութագրերը. մագնիս, կոճ, էլեկտրական հոսանք, ինդուկցիա, լարվածություն, մագնիսական թափանցելիություն, մշու, մագնիսական պոտենցիալ, մագնիսական հոսք, մագնիսական հաստատուն, մագնիսական շղթա:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է հիմնականում ճիշտ, առանց էական թերությունների:</p>
302.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են ուսումնական և ցուցադրական նյութեր, դաշտերի պատկերների բաշխվածության համակարգչային ծրագրային նյութեր, համակարգիչ, թվային պրոյեկտոր, ուսուցման տեխնիկական միջոցներ: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել կաբինետային պայմաններում:</p>
303.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>
304.	Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթայի պարամետրերը</p>
305.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի աշխատանքային ռեժիմները, 3) ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի պարամետրերը, 4) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ էլեկտրական շղթաների հիմնական հասկացությունները, 5) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ էլեկտրական շղթաների աշխատանքային ռեժիմները, 6) ճիշտ է հաշվում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ էլեկտրական շղթաների պարամետրերը:
306.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ որոշակի նախնական տվյալների հաշվարկել հաստատուն հոսանքի և փոփոխական հոսանքի միաֆազ ու եռաֆազ էլեկտրական շղթաների հիմնական պարամետրերը:</p>

		<p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային առանցքային հարցերը.</p> <p>Հաստատուն հոսանքի շղթայի հիմնական հասկացությունները և աշխատանքային ռեժիմները:</p> <p>Հաստատուն հոսանքի շղթայի հաշվարկային պարամետրերը, հաշվարկի համար անհրաժեշտ կախվածությունները:</p> <p>Փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները և աշխատանքային ռեժիմները:</p> <p>Փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հաշվարկները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում կատարվում է ճիշտ, թույլատրելի է որոշակի պարամետրերի հաշվարկների բացթողումներ:</p>
307.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր: Պարապմունքներն անց է կացվում անհրաժեշտ հագեցում ունեցող կաբինետում կամ լաբորատորիայում:</p>
308.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
309.	Ուսումնառության արդյունք 3	Էլեկտրական շղթաներում կատարել էլեկտրական չափումներ
310.	Կատարման չափանիշներ	<p>1) հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի պարամետրերը ամբողջ շղթայում և առանձին տեղամասերում ճիշտ է չափում,</p> <p>2) փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ էլեկտրական շղթաների պարամետրերը ամբողջ շղթայում և առանձին տեղամասերում ճիշտ է չափում,</p> <p>3) ճիշտ է չափում մագնիսական մեծությունները,</p> <p>4) չափիչ սարքավորումների ռեժիմները ճիշտ է կարգավորում,</p> <p>5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
311.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել էլեկտրական և մագնիսական շղթաներում կատարել ոչ պակաս 4 մեծությունների չափումներ:</p>

		<p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային հիմնական հարցերը.</p> <p>Հաստատուն և փոփոխական հոսանքի ամբողջ շղթայում և առանձին տեղամասերում չափվող պարամետրերը. հոսանք; լարում; ակտիվ, ինդուկտիվ, ունակային և ռեակտիվ դիմադրություն; հզորություն:</p> <p>Մագնիսական մեծությունների չափվող պարամետրերը. մագնիսական հոսք, ինդուկցիա:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
312.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է բավարար հագեցում ունեցող լաբորատոր պայմաններում, գործնական պարապմունքների միջոցով:
313.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
314.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել գծային էլեկտրական շղթաների անցումային պրոցեսները
315.	Կատարման չափանիշներ	<p>1) էլեկտրական շղթաներում անցումային պրոցեսների առաջացումը ճիշտ է ներկայացնում,</p> <p>2) տարբեր շղթաներում անցումային պրոցեսների գործնական կիրառման տեղը ճիշտ է ներկայացնում:</p>
316.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցման միջոցով, որի ժամանակ ուսանողը պետք է բացատրի գծային էլեկտրական շղթաների անցումային պրոցեսները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային հիմնական հարցերը.</p> <p>Անցումային պրոցեսների առաջացման պայմանները և գործնական կիրառման տեղը տարբեր շղթաներում:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան է տրվում:</p>
317.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով, օգտագործելով ուսումնական կաբինետի տեխնիկական հնարավորությունները:
318.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ
319.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում օգտագործվող կիսահաղորդչային

		սարքերը, էլեկտրոնային սխեմաներն ու սարքերը
320.	Կատարման չափանիշներ	<p>1) ապարատներում էլեկտրոնային սարքերի կիրառման առավելությունը ճիշտ է բացատրում,</p> <p>2) ապարատներում էլեկտրոնային սարքերի կիրառման թերությունները ճիշտ է բացատրում,</p> <p>3) էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերի տեսակները ճիշտ է ներկայացնում,</p> <p>4) կիսահաղորդչային սարքերի աշխատանքային բնութագրերը ճիշտ է բացատրում,</p> <p>5) էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում կիրառվող էլեկտրոնային սխեմաները ճիշտ է ներկայացնում,</p> <p>6) էլեկտրոնային սխեմաների աշխատանքի սկզբունքը ճիշտ է բացատրում,</p> <p>7) էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում կիրառվող իմպուլսային և թվային սարքերը, դրանց աշխատանքի սկզբունքը ճիշտ է ներկայացնում:</p>
321.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է առաջադրված էլեկտրոնային սխեմայում կատարել միացումներ: Ստորև ներակայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերի տեսակները, էլեկտրական ապարատներում օգտագործվող էլեկտրոնային սարքերի կիրառման բնութագրիչները, էլեկտրոնային ապարատներում և կերպափոխիչներում կիրառվող էլեկտրոնային սխեմաները, սարքերը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
322.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, օգտագործելով անհրաժեշտ ցուցադրական և ուսումնական նյութեր, տեխնիկական միջոցներ:
323.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ»		
324.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-014

325.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել հասարակական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և արդյունքների ընդհանրացման վիճակագրական մեթոդների կիրառման գործնական հմտություններ:
326.	Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
327.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
328.	Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության համար նախապատրաստման գործընթացը, 2) հաշվի հարաբերական և միջին մեծություններ, 3) բացատրի վարիացիայի երևույթը և կատարի հաշվարկներ, 4) հաշվի ինդեքսներ, 5) ներկայացնի դինամիկայի շարքերը, կատարի կորելյացիոն վերլուծություն, 6) ներկայացնի ընտրանքային մեթոդը:
329.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
330.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության համար նախապատրաստման գործընթացը
331.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) որոշումներ ընդունելու համար տեղեկատվության անհրաժեշտությունը և կարևորությունը հիմնավորում է, 2) տարբերակում է տեղեկությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում տեղեկությունների աղբյուրները և ձեռք բերման ձևերը, 4) տեղեկությունների խմբավորումը և ընդհանրացումը ճիշտ է կատարում, 5) ճիշտ է կազմում աղյուսակներ,

		6) ճիշտ է կազմում գրաֆիկներ և դիագրամներ:
332.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի ընդհանուր գիտելիքները վիճակագրական տեղեկությունների բնույթի, վիճակագրական դիտարկման տարբեր ձևերի առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողին հանձնարարվելու է կատարել վիճակագրական տեղեկությունների խմբավորում, այդ տեղեկությունները ներկայացնել աղյուսակների տեսքով, կազմել գրաֆիկներ և դիագրամներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - վիճակագրական տեղեկությունների անհրաժեշտությունը, տեսակները, աղբյուրները, - վիճակագրական դիտարկման նպատակը, օբյեկտը, միավորը, տեսակները, - վիճակագրական դիտարկման կազմակերպումը, - վիճակագրական տեղեկությունների խմբավորումը, խմբավորման հատկանիշը, խմբավորման ձևերը, - վիճակագրական աղյուսակներ, տեսակները, ձևավորման տեխնիկաները, - վիճակագրական տեղեկությունների գրաֆիկական ներկայացումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, գործնական հանձնարարությունները կատարում է մեթոդապես ճիշտ:</p> <p>Թույլատրելի են որոշ ոչ էական թերություններ:</p>
333.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական նյութեր,
334.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
335.	Ուսումնառության արդյունք 2	Հաշվել հարաբերական և միջին մեծություններ
336.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հարաբերական և միջին մեծությունների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) ճիշտ է հաշվում հարաբերական մեծություններ, 3) ճիշտ է հաշվում միջին թվաբանականներ,

		<p>4) ճիշտ է հաշվում հարմոնիկ միջիններ,</p> <p>5) ճիշտ է հաշվում միջին քառակուսայիններ,</p> <p>6) հաշվարկված միջին մեծությունների իմաստը ճիշտ է մեկնաբանում:</p>
337.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքներ կատարելու միջոցով: Ուսանողին հանձնարարվելու են տարբեր առաջադրանքներ, որոնց ընթացքում նա պետք է հաշվարկի միջին և հարաբերական մեծությունների բոլոր տեսակները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե յուրաքանչյուր իրավիճակում նա ճիշտ է ընտրում հաշվարկման մոտեցումը: Հաշվարկի ընթացքում նկատվող հնարավոր թվաբանական սխալները հաշվի չի առնվում:</p>
338.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, միկրոհաշվիչներ:</p>
339.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
340.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել վարիացիայի երևույթը և կատարել հաշվարկներ
341.	Կատարման չափանիշներ	<p>1) ուսումնասիրվող երևույթների հատկանիշներում վարիացիայի առկայությունը ճիշտ է բացատրում,</p> <p>2) ձևավորում է վարիացիոն շարք,</p> <p>3) ճիշտ է հաշվարկում վարիացիայի ցուցանիշները,</p> <p>4) ճիշտ է հաշվարկում վարիացիոն շարքի մոդան և մեդիանան,</p> <p>5) ուսումնասիրվող երևույթներում գնահատում է վարիացիայի մեծությունը,</p> <p>6) կատարում է հիմնավոր եզրակացություններ:</p>
342.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրամադրվելու է որևէ երևույթի հատկանիշի վերաբերյալ չկարգավորված տեղեկությունների շարք: Նա պետք է կազմի վարիացիոն շարք, հաշվարկի բոլոր ցուցանիշները, գնահատի ստացված արդյունքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Վարիացիայի երևույթը, վարիացիայի ցուցանիշների հաշվարկը, վարիացիոն շարքի մոդանի և</p>

		մեդիանանի հաշվարկը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը մեթոդապես ճիշտ է կատարվում:
343.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական ու մեթոդական գրականություն, բաժանվող նյութեր, միկրոհաշվիչներ:
344.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
345.	Ուսումնառության արդյունք 4	Հաշվել ինդեքսներ
346.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է ինդեքսների նշանակությունը և կիրառումը, 2) ինդեքսների կառուցման կանոնները ներկայացնում է, 3) ինդեքսների տեսակները ճիշտ է ներկայացնում, 4) անհատական ինդեքսներ ճիշտ է հաշվարկում, 5) ընդհանուր ինդեքսներ ճիշտ է հաշվարկում, 6) ըստ ինդեքսների կատարում է գործնական եզրահանգումներ:
347.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարականներ է տրվելու ինդեքսների բոլոր տեսակների հաշվարկման և գործնական կիրառման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Ինդեքսների տեսակները, նշանակությունը, կառուցման կանոնները, ինդեքսների հաշվարկման եղանակները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում ճիշտ: Ոչ էական թերությունները հաշվի չի առնվում:
348.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:
349.	Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

	Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
350.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել դինամիկայի շարքերը, կատարել կորելացիոն վերլուծություն
351.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է դինամիկայի շարքերի տեսակները, 2) ճիշտ է բացատրում դինամիկայի շարքերի տեսակները, 3) դինամիկայի ցուցանիշները ճիշտ է հաշվում, 4) ճիշտ է գնահատում դինամիկայի ցուցանիշները, 5) երևույթների միջև կապերի տեսակները ներկայացնում և մեկնաբանում է, 6) ճիշտ կազմում և լուծում է զույգային կապի հավասարումներ, 7) ճիշտ է ստանում կորելացիոն կապի հավասարումը, 8) ճիշտ գնահատում է երևույթների միջև կապի սերտության աստիճանը:
352.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կազմել դինամիկ շարք, հաշվել դինամիկայի ցուցանիշները, գնահատել յուրաքանչյուր ցուցանիշը: Հանձնարարվելու է նաև զույգային կապի հավասարումների միջոցով բացահայտել երևույթների հատկանիշների միջև կապի սերտության մակարդակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Դինամիկայի շարքերը, դինամիկայի ցուցանիշների հաշվարկումը, զույգային կապի հավասարումներ, կորելացիոն կապի հավասարումներ:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում է ճիշտ:</p>
353.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:</p>
354.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
355.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ընտրանքային մեթոդը
356.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ընտրանքային դիտարկման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը,

		<p>2) ճիշտ է ներկայացնում ընտրանքային դիտարկման տեսակները,</p> <p>3) ճիշտ է կատարում ընտրանքային դիտարկում,</p> <p>4) հաշվում է ընտրանքային համախմբի ցուցանիշները,</p> <p>5) ընդհանրացնում է ընտրանքային դիտարկման արդյունքները:</p>
357.	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողներին հանձնարարվելու է կատարել ընտրանքային դիտարկում և գնահատել արդյունքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Ընտրանքային դիտարկման տեսակները, դիտարկման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է մեթոդապես ճիշտ, իրականացված քայլերը հիմնավորվում են:</p>
358.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:</p>
359.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»		
360.	Մոդուլի դասիչը	ՋՏՆՏ-5-17-015
361.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները</p>
362.	Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 22 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 50 ժամ</p>

363.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
364.	Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը 5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր 7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ
365.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
366.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
367.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում, 2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում, 3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է, 4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է, 5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում, 6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում, 7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները, 8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:
368.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական

		<p>առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p>
369.	<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p>
370.	<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

371.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
